Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի
2014թ. ապրիլի 3-ի նիստի
№ 6/6.3 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհ[illegible] Ա. Հ. Սիմոնյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի առկա ուսուցմամբ
մագիստրատուրայի 2014/2015 ուստարվա ընդունելության

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կրթության և Գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ը, ԵՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ԵՊՀ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Օտարերկրյա բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է հարցազրույցի և համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի կարծիքի հիման վրա:

3. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, ուսումնամեթոդական վարչության պետի, ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչի անդամակցությամբ: Ռեկտորի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ, ուսումնամեթոդական վարչության պետի, համապատասխան ֆակուլտետների դեկանների և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի աշխատակիցների անդամակցությամբ: Քննությունների անցկացման համար պրոռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի դեկանը և համապատասխան մագիստրոսական ծրագրերի ղեկավարները:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 3 փուլով.

4.1. Առաջին փուլում անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ բակալավրիատի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 կամ ավելի բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 13: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

Հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

1. գերազանցության դիպլոմի առկայություն,

2.ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

ԵՊՀ-ում միայն մագիստրատուրայում գործող մասնագիտություններով՝ 090100 - «տեղեկատվական տեխնոլոգիաներ», 050100 - «կրթության կազմակերպում», 032500 - «սփյուռքագիտություն», 032700 - «եվրոպագիտություն», 032900 - «կովկասագիտություն», 040400 - «հասարակայնության հետ կապեր»,ինչպես նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի առաջին փուլի դիմորդների ընդունելությունն անվճար և վճարովի համակարգ կատարվում է ընդունելության քննության արդյունքներով՝ մրցութային հիմունքներով:

Առաջին փուլում 011411 - «գերմեծ ինտեգրալ սխեմաներ» մասնագիտությամբ մագիստրատուրայի անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա մասնագիտության «գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մասնագիտացման բակալավրիատի շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի:

060300 - «Դեղագիտություն» մասնագիտությամբ առաջին փուլով անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել 021000 - «դեղագործական քիմիա» մասնագիտությամբ տվյալ ուստարվա ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է բակալավրի դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ով՝ մրցութային հիմունքներով:

010500 - «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա , 032300 - «թարգմանչական գործ, գերմաներեն լեզու», 032300 - «թարգմանչական գործ,ռուսաց լեզու» մասնագիտություններով բակալավրիատի շրջանավարտները անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել համապատասխանաբար «ֆիզիկա», «գերմաներեն լեզու և գրականություն»,«ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ ըստ իրենց ՄՈԳ-ի:

4.2. **Երկրորդ փուլում** վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ (նաև 4.1. կետի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

4.1 կետի պահանջները բավարարող դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

030500 - «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրա կարող են դիմել միայն 030500- «Իրավագիտություն» մասնագիտության իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները:

060300 - «Դեղագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրա կարող են դիմել միայն 021000-»դեղագործական քիմիա» մասնագիտության և հարակից մասնագիտությունների շրջանավարտները: Հարակից մասնագիտությունների ցանկը հաստատում է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը:

4.3. **Երրորդ փուլում** անվճար (բանակից զորացրված (ԲՋ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգ կարող են դիմել ԵՊՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության մրցութային կարգով՝ նախորդող

ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

Մասնագիտության փոփոխման պարագայում ԵՊՀ շրջանավարտների կամ այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Երրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել նաև առաջին և երկրորդ փուլում ժամանակին չդիմած անձինք: Առաջին փուլի պահանջներին բավարարող դիմորդները վճարովի համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

5. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ: Դիմում-հայտում դիմորդը կարող է նշել առավելագույնը 3 մագիստրոսական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին, այն չբացվելու դեպքում՝ երրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում <<Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի>> (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2012թ. ապրիլի 20-ի նիստի թիվ 3/3 որոշմամբ) 5-րդ կետի պահանջին:
- բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճեններ,
- 4 լուսանկար (3x4 չափսի),
- զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում),
- ընդունելության ծառայությունների համար գանձվող 1000 դրամի վճարի անդորրագիր:

6. Ընդունելության փաստաթղթերն ընդունվում են՝ 1-ին փուլով՝ մայիսի 19-ից մինչև հունիսի 4-ը, 2-րդ փուլով՝ հունիսի 10-ից մինչև հունիսի 25-ը, 3-րդ փուլով՝ հուլիսի 3-ից մինչև օգոստոսի 25-ը:

Ընդունելությունը կատարվում է՝ 1-ին փուլով՝ հունիսի 9-ից մինչև հունիսի 12-ը, 2-րդ փուլով՝ հունիսի 27-ից մինչև հուլիսի 4-ը, 3-րդ փուլով՝ սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 5-ը:

7. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի: